ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

26 հուլիսի 2021 թվականի N 200-Լ

ՀՍԿԻՉ ԳՆՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 130-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների գրանցամատյանի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Մինչև Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 130-Ն որոշման ուժի մեջ մտնելը ձեռքբերված և չտնօրինված ապրանքների, ինչպես նաև Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 130-Ն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը հսկիչ գնմամբ ձեռք բերված և չտնօրինված ապրանքները մեկամսյա ժամկետում ևս հաշվառում են սույն հրամանով սահմանված կարգով մեկ գրանցամատյանում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 27-ին:

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 26
Երևան

competition.am կայքում հրապարակման օրը՝ 26 հուլիսի, 2021 թվական:

Հավելված N 1
Մրցակցության պաշտպանության
հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2021
թվականի հուլիսի 26-ի
թիվ 200-Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀՍԿԻՉ ԳՆՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույնով կարգավորվում է հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների միասնական գրանցամատյանի (այսուհետ՝ Գրանցամատյան) վարման հետ կապված հարաբերությունները:

2. Հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների հաշվառումն իրականացվում է ձեռքբերված ապրանքի վերաբերյալ լրացման ենթակա համապատասխան տվյալը հայտնի դառնալուց, իսկ «Ապրանքի տնօրինման վերաբերյալ գլխավոր քարտուղարի հրամանի ընդունման ամսաթիվ և համար» և «Ոչնչացման ակտի ամսաթիվ և համար» սյունակներում համապատասխանաբար գլխավոր քարտուղարի հրամանի ընդունումից և ոչնչացման ակտի ստորագրումից հետո ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ Գրանցամատյանում յուրաքանչյուր ապրանքի վերաբերյալ անհատական գրառում կատարելու միջոցով:

3. Գրանցամատյանում սահմանված որևէ տվյալի ստացման և լրացման անհնարինության դեպքում համապատասխան սյունակում կատարվում է «տվյալը բացակայում է» նշումը:

4. Գրանցամատյանի վարման աշխատանքներն իրականացնում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը:

5. Գրանցամատյանը վարվում է տարեկան կտրվածքով՝ հիմք ընդունելով ապրանքների ձեռք բերման տարին:

6. Գրանցամատյանը վարվում և պահպանվում է թղթային եղանակով:

Հավելված N 2
Մրցակցության պաշտպանության
հանձնաժողովի գլխավոր
քարտուղարի 2021 թվականի հուլիսի 26-ի
թիվ 200-Լ հրամանի

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ՀՍԿԻՉ ԳՆՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Հ/Հ	Գրանցամատյանում գրանցման համար	Գրանցման ամսաթիվ	Հսկիչ գնում կատարելու մասին հրամանի ընդունման ամսաթիվ և համար	Հսկիչ գնում կատարած անձի պաշտոն, անուն, ազգանուն	Գործը, որի նյութերին կցվել է ապրանքը	Ապրանքի					Ապրանքի տնօրինման վերաբերյալ գլխավոր քարտուղարի հրամանի ընդունման ամսաթիվ և համար	Ոչնչացման ակտի ամսաթիվ և համար	Գրանցամատյանում գրառումը կատարող անձի պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն
						Անվանում	Արտադրող/ներկրող ընկերության անվանում	Քաշ կամ չափման այլ միավոր	Պիտանիության ժամկետ	Ձեռքբերման գին			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14